ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի և «Գիտության և տեխնոլոգիաների մոսկովյան կոմիտե» ԲԲԸ-ի միջև

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն՝ ի դեմս նախագահ Ս.Գ. Հարությունյանի ու «Գիտության և տեխնոլոգիաների մոսկովյան կոմիտե» ԲԲԸ-ը՝ ի դեմս տնօրեն Դ.Ա. Ռոտոտաևի (այսուհետև՝ Կողմեր),

առաջնորդվելով համագործակցությունն ամրացնելու ու երկու ժողովուրդների միջև բարեկամական կապերը զարգացնելու փոխադարձ ցանկությամբ

և ելնելով Ռուսաստանի Դաշնությունում ու Հայաստանի Հանրապետությունում գիտության զարգացման շահերից,

կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Համաձայնագրի առարկան է՝ նպաստել երկու Կողմերի համար հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում համատեղ գիտական հետազոտություններին աջակցելու նպատակով Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության գիտական խմբերի և հետազոտողների միջև համագործակցության զարգացմանը, ինչպես նաև ընդլայնել 2010 թվականի հունվարի 29-ին «Մոսկվայի կառավարության և Երևանի քաղաքապետարանի միջև առևտրատնտեսական, գիտատեխնիկական ու հումանիտար ոլորտներում համագործակցության մասին» համաձայնագրի գործունեության շրջանակները:

Հոդված 2

Համաձայնագրի շրջանակներում Կողմերը իրականացնում են համագործակցություն՝ հետևյալ եղանակներով.

- գիտահետազոտական նախագծերի ու փորձարարակոնստրուկտորական մշակումների մրցույթների անցկացմամբ,
- Կողմերի պետություններում գիտատեխնիկական ոլորտում առկա հնարավորությունների ու անհրաժեշտությունների վերաբերյալ տեղեկատվության փոխանակմամբ,
- հայ-ռուսական համատեղ գիտական կոլեկտիվների կողմից իրականացվող գիտահետազոտական նախաձեռնությունների տեսքով,
- Հայաստանի Հանրապետությունում և Ռուսաստանի Դաշնությունում համատեղ գիտական միջոցառումների (համագումարներ, գիտաժողովներ, սեմինարներ և այլն) կազմակերպմամբ,
- աջակցության արժանացած նախագծերի հետագա ֆինանսավորմամբ:

Մրցույթների գիտական ուղղությունները, մրցույթների մասին դրույթները, անցկացման ժամկետներն ու պայմանները, ինչպես նաև ֆինանսավորման ծավալներն ու կարգը որոշվում են սույն Համաձայնագրի հավելվածով՝ համապատասխան մրցույթ հայտարարելուց ոչ ուշ, քան երեք ամիս առաջ:

Կողմերի համաձայնությամբ գիտությունների բնագավառում կարող են կիրառվել համագործակցության նաև այլ ձևեր:

Յուրաքանչյուր Կողմ իրավունք ունի նաև միակողմանի աջակցություն ցուցաբերել Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության գիտնականների միջև գիտական համագործակցությանը:

Հոդված 3

Կողմերը միմյանց օժանդակում են գիտական նյութերի և գրականության փոխանակման հարցում՝ ներառյալ յուրաքանչյուր Կողմի աջակցությամբ հրատարակվածները. ընդ որում՝ փոխանակումը իրականացվում է յուրաքանչյուր Կողմի օրենսդրության համաձայն:

Հոդված 4

Կողմերը միմյանց օժանդակում են գիտական նախագծերի փորձաքննության իրականացմամբ՝ որպես փորձագետ ներգրավելով Հայաստանի և Ռուսաստանի առաջատար գիտնականների:

Հոդված 5

Համապատասխան Համաձայնագրի՝ կոնկրետ գործունեության իրականացումից ստացված տեղեկատվությունն ու գիտական հետազոտությունների արդյունքները համաշխարհային գիտական հանրության մեջ տարածվում են սովորական տեղեկատվական խողովակներով ՝ ընդունված ընթացակարգի համաձայն:

Կողմերը լուծում են համատեղ նախագծերի իրականացման ընթացքում ստեղծված հնարավոր մտավոր սեփականության պաշտպանության հարցերը՝ հաշվի առնելով միջազգային իրավունքի նորմերը և Կողմերի երկրներում գործող օրենսդրությունը:

Հոդված 6

Կողմերը սույն Համաձայնագրի կատարման մասին տեղեկատվությունը հրապարակում են իրենց պարբերական հրատարակություններում:

Հոդված 7

Սույն Համաձայնագրի համատեղ գործունեությունը իրականցվում է միջազգային պարտավորությունների և Կողմերի ազգային օրենսդրության համապատասխան:

Համաձայնագրի իրագործման հետ կապված հարցերը լուծվում են նամակագրության միջոցով կամ Կողմերի ներկայացուցիչների հանդիպումների ընթացքում:

Հոդված 8

Համաձայնագիրը կարող է լրացվել և փոփոխվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Նշված լրացումները և փոփոխությունները կձևակերպվեն արձանագրությունների տեսքով, որոնք ուժի մեջ կմտնեն ստորագրման օրվանից և կկազմեն սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

Հոդված 9

Համաձայնագիրը ուժի մեջ է ստորագրման օրվանից:

Համաձայնագիրը կնքվում է հինգ տարի ժամկետով: Յուրաքանչյուր Կողմ իրավասու է վաղաժամկետ դադարեցնել Համաձայնագիրը: Այդ դեպքում՝ յուրաքանչյուր Կողմ պետք է ծանուցի մյուս Կողմին այն դադարեցնելու իր մտադրության մասին Համաձայնագրի գործողության ժամկետի ավարտից վեց ամիս առաջ: Այս դեպքում՝ Կողմերը պարտավորվում են կատարել մինչև պայմանագրի դադարեցումը ստանձնած նախագծերի ֆինանսավորման պարտավորությունները:

Համաձայնագրի դադարեցումը ձևակերպվում է առանձին համաձայնագրով կամ դադարեցման ակտով:

Կատարված է Մոսկվա ք. « 2010 թ. մարտի 24–ին» երկու բնօրինակով՝ յուրաքնչյուրը հայերեն և ռուսերեն, ընդ որում, երկու տեքստերն էլ հավասարազոր են:

Կողմերի իրավաբանական հասցեները

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե	«Գիտության և տեխնոլոգիաների մոսկովյան կոմիտե» ԲԲԸ
Օրբելի 22 ք.Երևան, 375028 Հայաստանի Հանրապետություն	Բորիսոգլեբյան նրբ.,շ.6,շին.3 ք.Մոսկվա, 121069 Ռուսաստանի Դաշնություն

Կողմերի ստորագրությունները

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի կողմից	«Գիտության և տեխնոլոգիաների մոսկովյան կոմիտե» ԲԲԸ
Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ՝	«Գիտության և տեխնոլոգիաների մոսկովյան կոմիտե» ԲԲԸ Գլխավոր տնօրեն՝
Ս.Հ.Հարությունյան	Գ.Ա. Ռոտոտան